Հաշվետվություն

2024 թվականի մարտի 11-ից 14-ը Լյուքսեմբուրգ կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**
   Վահագն Մուրադյան, Գեոդեզիայի և հողաշինարարության վարչության պետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Լյուքսեմբուրգ, մարտի 11-ից 14-ը

3. **Հրավիրող կողմը.**
   Միավորված ազգերի կազմակերպություն
   Եվրոպական միության եվրոպական հանձնաժողով. «ԵվրոՍտատ»

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

- Մասնակցություն ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողովի (UNECE), Աշխարհագրական տեղեկատվական համակարգերի հանձնաժողովի (GISCO) և Երկրատարածական տեղեկատվության գլոբալ կառավարման փորձագետների կոմիտեի (UN-GGIM) համատեղ կազմակերպած վիճակագրական և երկրատարածական տվյալների ինտեգրմանը նվիրված աշխատանքային խմբի հանդիպմանը,
- Նոր գործընկերային հարաբերությունների հաստատում ոլորտային միջազգային կազմակերպությունների և տարբեր երկրների պաշտոնական ներկայացուցիչների հետ,
- Մասնագիտական բնագավառում միջազգային փորձի փոխանակում:

5. **Քննարկված թեմաները.**
   Հանդիպման 2 օրերի ընթացքում ներկայացվեցին հետևյալ հիմնական թեմաները.
   - Եվրոստատի երկրատարածական գործունեության ակնարկը և ապագա պլանները,
   - Համաեվրոպական տվյալների բազա,
   - Վիճակագրական և տարածական տվյալների ինտեգրումը և արտապատկերումը,
   - Եվրոպայում վիճակագրական և տարածական տվյալների ինտեգրման գործընթացների զարգացումը,
   - Երկրի հեռազննում,
   - UN-GGIM: Եվրոպա-գործառույթները,

- UNECE – գործառույթները,
- Պանելային քննարկում. Եվրոպայում GSGF-ի իրականացումը:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Մարտի 12-ից 13-ը տեղի ունեցավ Վիճակագրական և երկրատարածական տվյալների ինտեգրման աշխատանքային խմբի հանդիպումը, որի ընթացքում ելույթով հանդես եկան աշխատանքային խմբի հիմնական անդամ երկրների ներկայացուցիչները՝ Լեհաստան, Շվեդիա, Ֆինլանդիա, Նորվեգիա, Լիտվա և այլն, և ներկայացրին իրենց երկրների փորձը վիճակագրական և երկրատարածական տվյալների ինտեգրման, փոխանակման, արտապատկերման ոլորտում: Առանձնակի հետաքրքրություն էին ներկայացնում ժամանակակից տեխնոլոգիաների, այդ թվում՝ հեռազննման և ԱՏՀ/GIS համակարգերի, արհեստական բանականության գործնական կիրառման արդյունքները:

Հանդիպմանը իրենց գործունեության մասին ներկայացրին նաև միջազգային կազմակերպությունները՝ «Եվրոստատն» ու «Եվրոգեոգրաֆիքսը»:

Քննարկումների ժամանակ մասնակից երկրներին ուղղված հարցադրումների արդյունքների ամփոփումը ցույց տվեց, որ գրեթե բոլոր երկրներում որպես մարտահրավեր առանձնացվում է երկրի ներսում գործող վիճակագրական և երկրատարածական տվյալների լիազոր մարմինների թույլ համագործակցությունը, որի ուղղությամբ անհրաժեշտ է իրականացնել գործուն քայլեր: Մասնակիցները կարևորեցին նաև երկրատարածական և վիճակագրական տվյալների ինտեգրման ստանդարտների մշակման գործընթացը: Հաշվի առնելով վերոնշյալ մարտահրավերները՝ աշխատանքային խմբի կողմից նախատեսվում է մշակել վիճակագրական և երկրատարածական տվյալների ինտեգրման ընդհանուր ուղեցույց, որը կնպաստի ազգային մակարդակով գործընթացների արդյունավետ իրականացմանը:

Աշխատանքային հանդիպման 2-րդ օրը տեղի ունեցավ նաև UN-GGIM: EUROPE - ESS - UNECE միացյալ 10-րդ հանդիպումը, որի ժամանակ UN-GGIM: EUROPE-ի, ESS-ի և UNECE-ի ներկայացուցիչները ներկայացրին համատեղ աշխատանքի արդյունքները: Ամփոփվեցին նաև 2023 թվականի աշխատանքային ծրագրի կետերը, և ներկայացվեցին ընթացիկ տարվա աշխատանքային ծրագրի հիմնական թեմաները, որոնք վերաբերում են տվյալների ինտեգրմանը, կայուն զարգացման նպատակներին, ինտեգրված երկրատարածական տեղեկատվության շրջանակին (IGIF), տվյալների ռազմավարության և քաղաքականության մշակմանն ու իրականացմանը:

Աշխատանքային երկու օրերի ընթացքում առանձին հանդիպումներ և քննարկումներ են եղել կազմակերպիչների՝ Եվրոպական միության եվրոպական հանձնաժողովի «ԵվրոՍտատի» ներկայացուցիչների հետ, և քննարկվել են հետագա համագործակցության հնարավորությունները: Քննարկումներ ենք ունեցել նաև

Վրաստանի, Լիտվայի ներկայացուցիչների հետ՝ ազգային գեոպորտալի և վիճակագրական տվյալների ինտեգրման հարցերի վերաբերյալ:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Աշխատանքային հանդիպման ավարտին ամփոփ հաշվետվության մեջ հստակեցվեցին հետագա անելիքները և ապագայի տեսլականը: Ամփոփելով հանդիպման արդյունքները՝ կազմակերպիչների կողմից կարևորվեց հատկապես ազգային վիճակագրական և երկրատարածական գործակալությունների միջև միջազգային համագործակցության խորացման գործընթացը:

Վիճակագրական և երկրատարածական տվյալների ինտեգրման աշխատանքային խմբում նույնիսկ «ոչ լիրավ անդամ» կարգավիճակով ակտիվ մասնակցությունը հնարավորություն է ընձեռելու մասնակից դառնալու երկրատարածական տվյալների կառավարման, վիճակագրական տվյալների ինտեգրման համաշխարհային և տարածաշրջանային գործընթացներին, ինչպես նաև տարբեր երկրների լավագույն փորձի և հմտությունների փոխանակման, մասնագետների ուսուցման և վերապատրաստումների կազմակերպմանը:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

- Եվրոպական միության Արևելյան գործընկերության նախագծի շրջանակներում առաջարկվող դրամաշնորհի միջոցով Հայաստանի Հանրապետությունում երկրատարածական և վիճակագրական տվյալների ինտեգրման գործընթացի իրականացումը:
- Էլեկտրոնային նամակագրության միջոցով 2024-2025 թվականներին աշխատանքային հանդիպումներին և աշխատաժողովներին Հայաստանի ներկայացուցիչների մասնակցության հարցի քննարկումը:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

Վահագն Մուրադյան 19.03.2024 թ.